ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈԳՈՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումից հետո Տոգոյի Հանրապետության հետ մշակույթի ոլորտում պետական մակարդակով համագործակցություն չի ծավալվել: Սույն համաձայնագրի ստորագրումը նոր հարթություն է տեղափոխում Հայաստանի Հանրապետության և Տոգոյի Հանրապետության միջև համագործակցությունը մշակույթի ոլորտում և իրավական հիմք ստեղծում դրա հետագա զարգացման համար:

Համաձայնագրի ստորագրումը թույլ կտա հավասարության, փոխշահավետության սկզբունքների հիման վրա զարգացնել երկու պետությունների միջև համագործակցությունը մշակույթի ոլորտում և խրախուսել երկու պետությունների տարածքներում գործող մշակութային կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատումը, ինչպես նաև իրականացնել երկկողմ և բազմակողմ ծրագրեր, նախագծեր, նախաձեռնություններ և համաձայնագրի պահանջներից բխող այլ գործառույթներ ևս:

Մշակույթի ոլորտում սույն համաձայնագրի առկայությունը թույլ կտա խթանել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թատերական, երաժշտական և անհատ կատարողների, ցուցահանդեսների փոխանակումը, ֆիլմերի փոխանակման միջոցով համագործակցությունը կինոյի ոլորտում, միջազգային փառատոներին և այլ մշակութային միջոցառումներին մասնակցությունը, միմյանց տարածքներում մշակութային և ֆիլմերի շաբաթների կազմակերպումը:

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը գրադարանների, արխիվների, թատրոնների միջև՝ խթանելով տեղեկատվության և փորձի փոխանակումը:

Կողմերը կստեղծեն խառը հանձնաժողով, որի նիստերը կգումարվեն երկու տարին մեկ անգամ՝ Երևանում և/կամ Լոմեում: